ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Արմավիրի մարզ
Արազափի համայնք
04403613
թիվ 122
«22» 11 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի ավագանու 2014թվականի նոյեմբերի 20-ին կայացած թիվ 11 արտահերթ նիստի որոշումը:

Առդիր՝ 57 թերթ:

ԱՐԱԶԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ / [signature] / Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.8/13344-14
«22» 11 2014

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ (ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ)

(մարզի անվանումը)

ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

(քաղաքային,գյուղական,քաղային համայնքի անվանումը)

# 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

(քաղաքային,գյուղական,քաղային համայնքի անվանումը)

ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N 33 -Ն ՈՐՈՇՄԱՄԲ

(ամիս ամսաթիվ)

(համայնքի բյուջեն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԲԱԳՐԱՏ ԲԱԲԿԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

(Անուն, հայրանուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ

«20» Նոյեմբերի 2014թ. N 33-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի N-31Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16–րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, 56-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով 17 նոյեմբերի 2014թվականի սուբվենցիայի տրամադրման NԳՏ-120 պայմանագիրը և համայնքի ղեկավարի պաշտոնակատար Բագրատ Վարդանյանի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի ավագանու 2013թվականի դեկտեմբերի 06-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 31-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումը (սուբվենցիան) ավելացնել 3500.0հազ. դրամ, որը պետք է տրամադրվի «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն » հիմնադրամին վերջինիս կողմից Արազափ համայնքի 2014թվականի օգոստոսի 15-ի N ԳՏ/87 պայմանագրի շրջանակում հատկացված տրակտորի արժեքի 50%-ը:
2) 01. 1. 1 բաժին խումբ դասի 5121 հոդվածին ավելացնել 3500.0 հազ. դրամ, նույն բաժին խումբ դասի 5122 հոդվածց պակասեցնել 25.0հազ. դրամ, նույն բաժին խումբ դասի 5132 հոդվածին ավելացնել 25.0 հազ. դրամ: 01. 6. 1 բաժին խումբ դասի 4823 հոդվածից պակասեցնել 37.0 հազ. դրամ, նույն բաժին խումբ դասի 4819հոդվածին ավելացնել 37.0հազ.դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ

Բաբոյան Քարամարդ ------------
Գրիգորյան Գորիկ ------------
Գևորգյան Հարություն ------------
Մելքոնյան Սամվել ------------
Սիմոնյան Իգոր ------------

ԱՐԱԶԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝/ / Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Կ.Տ.

2014թվականի նոյեմբերի «20»
գ. Արազափ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N33-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի ավագանու 2014թվականի նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին» N33-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով, և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

ԱՐԱԶԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ /signature/ Բ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի ավագանու 2014թվականի նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին» N33-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:*

ԱՐԱԶԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ / / Բ.ՎԱՐԴԱՆՅԱՆ